բում հանդես եկած ասպետության, ուներ բոլորովին այլ առաքելություն։ Նրա հիմնական նպատակն էր, ոչ թե ուրիշի երկրների գավթումը, ինչպես այդ տեսնում ենք ասպետական հոգևոր օրդենների մոտ, այլ Կիլիկիայում ստեղծված հայ պետության և նրա բնակչության ֆիզիկական գոյության և ունեցվածքի պաշտպանությունը։

Նախքան բուն ասպետության հարցին անցնելը, մենք նպատակահարմար ենք գտնում որոշ չափով անդրադառնալ Կիլիկյան հայկական պետության բանակի, հատկապես նրա կորիզը կազմող հայոց հեծյալի հարցին, ապա ցույց տալ հայ ասպետների տեղը, դերն ու նշանակությունը այդ բանակում, նրա նմանություններն ու տարբերությունները արևմտաեվրոպական ասպետությունից։

Այսպես, բուն Հայաստանի հայոց հեծյալի նմանությամբ բանակի գլխավոր հրամանատարն էր սպարապետը[3], որը Կիլիկիայում արևմտաեվրոպական տերմինով կոչվում էր գունդստաբլ[4]։ Նրա օգնականներն էին մարաջախտը կամ մարեշալը[5], որն ինտենդանտական գործն էր գլխավորում, և սպասալարը՝ հեծյալ ջոկատների հրամանատարը[6]։

Ինչպես բուն Հայաստանում՝ Արշակունիների[7] և Բագրատունիների[8] ժամանակ, այնպես էլ Կիլիկիայում, մշտական բանակի կորիզը՝ «հայոց հեծյալը» կազմված էր ազատներից, որոնք Կիլիկիայում կոչվում էին ձիավորներ։ Այս մասին ուղղակի մատնացույց է անում Սմբատը գրելով. «Ապա սոյն ամի չէ (1256) յամսեանն հոկտեմբերի աշխարհաժողով արարեալ թագաւորն Հեթում հանդերձ հարազատօք իւրովք, և համօրեն, ազգայնօք և ազատօք, որ և ասէին, թէ ժողովեցան իբրև ԺԲ բիւրս»[9]։ Նույն հեղինակը իր «Դատաստանագրքում» գրում էր. «և զիշխանքն զատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն և իրենց տեսովն, նոյնպէս և զազատքն՝ որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն... և այլ ցած հեծելորքն այլ վերցածքն, որ ազատ կոչին»[10]։

Օրդենները, որոնցից միայն հյուրընկալները կամ հիվանդախնամները, որպես թագավորի վասալներ, «տային ամէն տարի հեծել ի ծառայութիւն 400 մարդ...»[11]։

Արքունական և իշխանական ազատազունդ հեծյալ բանակից բացի, պատերազմի ժամանակ հավաքագրվում էր. «աշխարհաժողով ռամիկ քաղաքաց

---

3 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 235, 238, 247։ Հմմտ. «Սմբատայ Սպարապետի պատմութիւն», Փարիզ, 1856, էջ 110։ Մատենադարանի ձեռագիր № 4243, էջ 222։

4 Ներսես Լամբրոնացի, Թուղթ առ Լևոն, 1865, Վենետիկ (Գրիգոր կաթողիկոսի Տղա կոչելոյ նամականի), էջ 239—240։ Recueil des historiens des Croisades. Documents Armeniens. Tome III, p. 606.

5 Ղևոնդ Ալիշան, Սիսուան, 1883, ի Վենետիկ, էջ 475։ Տե՛ս նաև Սամուէլ Անեցւոյ՝ Պատմութիւն, էջ 209—210։

6 «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչելոյ նամականի», 1865, Վենետիկ, էջ 240։

7 Ակադեմիկոս Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1952, էջ 112—119։

8 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն, էջ 356։ Ա. Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 56։ Ստ. Օրբելյան, Պատմութիւն, էջ 185, Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 75։

9 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 231։

10 Смбат Спарапет, Судебник. Перевод с древнеармянского А. Галстяна, Ереван, 1958, стр. 82.

11 «Սմբատ Սպարապետի պատմութիւն», 1856, էջ 109։